

եմք հաստատուն եւ զանշարժ բանն, որ ասէ,- յոր եւ հաւատացեալ եմք անշարժութեամբ,- թէ *Չի՞նչ աւագուտ է մարդոյ, թէ զաշխարհ ամենայն շահեսցի, եւ զանձն իւր կորուսցէ. եւ կամ զի՞նչ տացէ մարդ փրկանս ընդ անձին իւրոյս*: 20 Եւ ոչ զմեր եւեթ զոգւոց ինդրեմք զաւագուտն, այլ եւ ընդ այլոցն ինդամք ընդ փրկութիւն¹: 21 Եւ ոչ՝ որ փախուցեալս եմք՝ յերկիւղէ ոք ինչ սրոյ կարծիցէ² զայս զմենջ, յորմէ ոչ ոք երբէք զանգիտեալ յազգիս մերում, եւ ոչ երբէք³. Եւ թէ ո՛րպէս ի վերայ ընկերի բարւոյ առաւել քան յանձին⁴ միշտ հոգալով զանձն եղեալ է այսմ տոհմի՝ զայն եւ ամենայն դուք, Յայք, գիտէք ստուգութեամբ ի պատմութենէ գրոց եւ ի լսելոյ ձեր յաւագաց: 22 Բայց ի նենգաւոր խաբէութենէ ձերմէ, զոր արարեալ է ձեր ընդ նախնիս մեր հաւնապագ՝ զայն ամենայն յիշելով զնացեալ եմք լինել անձնապործք. որպէս ցանկ ձեր մղեալ է զմեզ ի նեղ, եւ զձեր անձինս ի բաց ունելով՝ մեր միայն ազգս պատահեալ է վշտաց մեծաց եւ մահուց: 23 Բայց սուրբ եւ երկնաւոր հրաւիրակիդ Աւետարանի ոչ կացեալ ոք է ընդդէմ ի մեր ազգես, եւ ոչ մեք կամք. քա՛ն լիցի: 24 Դուք թէ միամտութեամբ վարիք եւ կամ երկմտութեամբ՝ դուք գիտէք եւ սուրբ Աւետարանդ, որ ճանաչէ զամենայն եւ դատի ըստ իւրաքանչիւր գործոցն»:

ԼԱ. Եւ զայս ասացեալ սրբոյ առնն Վարդանայ տեառն Մամիկոնեից եւ Յայոց սպարապետի՝ կամակցութեամբ երանելի եղբարցն իւրոց եւ սիրելեաց դարձան անդրէն առ ընկերսն իւրեանց ի բանակն Յայոց⁵: 2 Եւ եկեալք ի միաբանութիւն բազմութեանն՝ ոչ առնէին դուլ եւ դադար խորհուրդք սրբոյ սպարապետին Յայոց Վարդանայ՝ լոկ միայն առտնին կատարել քահանայիւք եւ այլ բազմութեանն պաշտանեիւք դրանն իւրոյ զպաշտան կարգեալ ժամուցն, զոր զցայգ եւ զցերեկ բազում փութով վճարէին անյապաղ. այլ միաբանութեամբ ամենայն Յայովք երթալ յեկեղեցի ցանկայր: 3 Բայց թեպետ եւ նեղեր չերթալով, այլ եւ կամաւ արգելեալ՝ առ վայր մի համբերեր իրացն, հոգալով եւ զպետս ընկերացն, որպէս իւրոյ տանն եւ անձին. մանաւանդ յաղագս Աշուշայի Վրաց բղեշխի եւ որդւոց իշխանին Սինեաց Վասակայ, զորս արգելեալ պահեաց անդրէն ի դրան թագաւորն Պարսից Յազկերտ⁶: 4 Եւ զայս խորհեր սուրբն Վարդան, իբրեւ ոչ առ ի պետս ինչ

ա Մարկ. Ը 36-37

1 Ատ. ինդրեմք ընդ փրկութեան. Բտ. ինամք ընդ փրկութեան. Գտ. ինդամք ընդ փրկութեան. 2. այսպէս

2 Գտ. կարծեցի

3 Գտ. յազգիս մերում, ոչ երբէք

4 ՏՏ. քան զանձին

5 2. ի բանակն հայոց-ից յետոյ ունի ժզ (վրան պատիւ)

6 Ատ. ազկերտ